ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԻՍՈՒՆ ՏԱՐՈՒՄ

Բանախիր. գիտ. դոկտոր Գ. Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

1943 թ. Հայաստանի գիտությունների ակադեմիայի ստեղծման օրերին հնչեց հիմնադիր անդամներից՝ Ավետիք Իսահակյանի պատմական մեծ անելիքների կոչող խոսքը. «...Ակադեմիան պիտի համախմբե հայ միտքը և գլխավորե այն։ Արդի գիտական մեթոդների լուսարձակի տակ նա պիտի հիմնավորե հետազոտությունները և ուսումնասիրությունները։ Գիտական անսպառ անալիզի բովով պիտի անցկացնե մեր բովանդակ կուլտուրան և կազմե նրա սինթեզը՝ հայտնաբերելով բյուրեղացած, անվիճելի արժեքներ ազգային և համամարդկային իմաստով։ ...Եվ վերջապես, Հայկական ակադեմիայի կուլտուր-պատմական մեծ գործերից առաջնակարգն է՝ բարձրացնել հայ ժողովրդի ինքնաճանաչությունը, խորացնել հայրենասիրությունը, գիտակցական սեր զարգացնել նրա մեջ դեպի իր հայրենիքը, լեզուն, կուլտուրան և հավատ դեպի իր պայծառ ապագան» («Խորհրդային Հայաստան», 1943, № 242)։

Հետադարձ հայացքով կարող ենք ասել, որ ակադեմիան իրավամբ արդարացրել է մեծ բանաստեղծի ու հայրենասերի սպասելիքները։

Գիտական կյանքի ու գրքի կեսդարյա ձեռքբերումների վկայություններից մեկն էլ Գիտությունների ակադեմիայի հրատարակչության ստեղծման իրողությունն էր։ Ինչպես հայտնի է, 1935 թ. ստեղծված միութենական ակադեմիայի հայկական մասնաճյուղում (ԱրմՖԱՆ) հրատարակչությունն անում է առաջին քայլերը, լույս ընծայելով Գ. Աղաջանյանի «Ցանքատարածությունները և ագրոտեխնիկայի հիմունքները», Ա. Ջտչյանի «Մխախոտագործության շրջանների հողատարածքը», Ա. Տեր-Պողոսյանի Հայաստանի ֆաունային վերաբերող աշխատանքները և այլն։

Միութենական ակադեմիայի հայկական մասնաճյուղի հրատարակչական գործունեությունն ընդգրկեց լայն շրջագիծ՝ հասարակական գիտություններ. ֆիզիկամաթեմատիկական գիտություններ՝ ֆիզիկա, մաթեմատիկա, աստղագիտություն. կենսաբանական՝ մանրէաբանություն, կենսաբանություն, կենդանաբանություն, գենետիկա, սելեկցիա, ֆիզիոլոգիա. գյուղատնտեսական գիտություններ՝ հողագործություն, պտղաբուծություն, այգեգործություն։ Ներկայացված էին և բժշկությունը, տեխնիկական ու քիմիական գիտությունները, շրջանությունը և այլն։

Արդեն իսկ ԱրմՖԱՆի ձևավորման շրջանում նկատելի է դառնում հիմնարար և կիրառական գիտությունների աճող կշիռը։ Ակադեմիայի գիտահետազոտական ուղղության ձևավորման, զարգացման համար վճռորոշ նշանակություն է ունեցել այն հանգամանքը, որ նրա աշխատանքները գլխավորել են Հովսեփ Օրբելին և Վիկտոր Համբարձումյանը։ Շուտով համամիութենական ճանաչման են արժանանում Ալիխանյան եղբայրների, Մ. Ջայլախյանի, Հ. Մաղաքյանի, Լ. Ռոտինյանի, Ն. Հարությունյանի, Ա. Շահինյանի, Ա. Թախտաջյանի, Մ. Ջրբաշյանի, Ս. Մերգելյանի և ուրիշների աշխատանքները։

Հաստատուն, ծանրակշիռ հեղինակություն են նվաճում հայագիտական հրատարակությունները՝ հայ ժողովրդի պատմությանը, լեզվին, գրականությանը, հնագիտությանն ու աղգագրությանը, արվեստի տարբեր ճյուղերին նվիրված ուսումնասիրությունների, ինչպես և անցյալի մշակութային հուշարձանների տպագրությամբ։ Մ. Աբեղյանի, Հ. Մանանդյանի, Հր. Աճառյանի, Ստ. Մալխասյանցի, Հ. Օրբելու, Դ. Ղափանցյանի, Թ. Թորամանյանի, Խ. Սամվելյանի, Ստ. Լիսիցյանի դասական մնայուն ներդրումներով ակադեմիան հիմնադրման օրերից դառնում է հայագիտության կենտրոն։

Մեծարժեք մենագրական աշխատությունների կողքին տակավին 1930—40-ական թթ. ձևավորվում է գիտական հրատարակությունների յուրօրինակ տեսակ. ճյուղային առանձին աշխատանքներ ի մի են բերվում ժողովածուներով, որպիսիք յուրովի ամփոփում էին տվյալ գիտության ձեռքբերումները. ինչպես, ասենք, «Կենսաբանական ինստիտուտի աշխատություններ» կամ «Սրկրաբանական ինստիտուտի աշխատություններ», «Հնագիտական սլեղումները Հայաստանում» և այլն։ Այս և նման ժողովածուների առավելությունն այն էր, որ տվյալ գիտության ճանաչված ու փորձառու ներկայացուցիչների կողքին գիտական ասպարեզ էին մուտք գործում երիտասարդներ։

1940—50-ական թթ. արդեն սկսում են նշանավորվել բազմահատոր հրատարակություններով. «Հայաստանի կենդանական աշխարհը», որի առաջին հատորը լույս է տեսել 1939-ին և հրատարակվել է 23 հատոր. «Հայաստանի ֆլորան», առաջին հատորը՝ 1952-ին, հրատարակվել է 10 հատոր. «Ուղեղի բիոքիմիայի հարցերը՝ սկսել է հրատարակվել 1961-ից. 1956-ից հրատարակվել են «Հեսերոցիկլիկ միացությունների սինթեզները՝ 18 պրակ. «Հայաստանի երկրաբանությունը», հրատարակվել է 10 հատորով։ Նման մատենաշարերով են հրատարակվել նաև «Հաշվողական տեխնիկայի և կիբեռնետիկայի հարցերը», ֆիզիոլոգիայի ինստիտուտի աշխատությունները և այլ հրատարակություններ։ ՀԳԱ հրատարակությամբ լույս տեսած գրքերից շատերը թարգմանվել են օտար լեզուներով, Հայաստանի գիտությանը բերելով միջազգային ճանաչում։

Ակադեմիայի հետազոտական աշխատանքների զարգացման հիմքում եղել են հիմնարար-տեսական գիտությունների բնագավառում ձեռք բերված արդյունքները, այդ առումով հատանի են Գ. Սահակյանի, Մ. Տեր-Միքայելյանի, Ա. Թալալյանի, Ա. Նազարովի, Գ. Ղարիբյանի, Բ. Մարգարյանի, Գ. Գուրզադյանի, Ա. Գալոյանի և ուրիշների աշխատությունները։

Գիտությունների ակադեմիայում ծնունդ են առնում հանրապետության տնտեսության համար վճռորոշ նշանակություն ունեցող կիրառական ուղղություններ։ Լույս են տեսել. էլեկտրաաեխնիկայի և ռադիոֆիզիկայի ասպարեզում՝ Ա. Իոսիֆյանի, Հ. Ադոնցի, Է. Միրզաբեկյանի, Ռ. Մարտիրոսյանի, Պ. Հերունու, Վ. Ալեքսեևսկու, հաշվիչ մեքենաների արտադրության բնագավառում՝ Ֆ. Սարգսյանի, Ռ. Աթոյանի, Ա. Քուչուկյանի, Հ. Թերզյանի, Ռ. Վարշամովի, Յու. Շուքուրյանի, քիմիական արդյունաբերության ասպարեզում՝ Ս. Ղամբարյանի, Ա. Մնջոյանի, Ա. Նալբանդյանի, Ա. Բաբայանի, Վ. Իսաղուլյանցի, Ս. Մացոյանի, Ս. Վարդանյանի և շատ ուրիշների այն կիրառության արժանացած հետազոտությունների արդյունքները։ Տեսական կիրառական բնույթի աշխատանքների առումով զգալի ավանդ ունեն Ի. Եղիազարովը, Մ. Կասյանը, Դ. Սեդրակյանը, Ս. Համբարձումյանը, Էդ. Տեր-Ղազարյանը, Ա. Մկրտչյանը, Ա. Ամատունին և շատ ուրիշներ։ Երկրի մասին գիտությունների դարգացմանը իրենց ավանդն են մուծել Կ. Պաֆենհոլցը, Ա. Գաբրիելյանը, Ա. Ասլանյանը, Ս. Մկրտչյանը և ուրիշներ։

Գիտության ու արտադրության փոխադարձ կապի արդյունք էին կենսաբանության ու գյուղատնտեսության բնագավառում՝ Մ. Թումանյանի, Գ. Աղաջանյանի, Վ. Գուլքանյանի, Գ. Դավթյանի, Ա. Թամամշևի, Խ. Երիցյանի, Վ. Ղազարյանի, Ա. Մաթևոսյանի, Է. Աֆրիկյանի, Ս. Մովսիսյանի, Ս.

Յաբլոկով-Խնձորյանի, Լ. Երզնկյանի, Ն. Գաբրիելյանի աշխատությունները, բժշկության ասպարեզում՝ Լ. Հովհաննիսյանի, Է. Հասրաթյանի, Բ. և Վ. Ֆանարջյանների, Ս. Բակունցի, Հ. Բակլավաջյանի, Ս. Ավդալբեկյանի, Է. Գաբրիելյանի, Կ. Ղարագյոզյանի ուսումնասիրություններն ու հետազոտությունները։

Գիտությունների ակադեմիայի ընդհանուր կենսագործունեության ընթացքում նշանակալի հաջողություններ են հասել և հասարակական գիտությունները։ Անցյալի ավանդների ոգով և հետևությամբ պատմագիտության, լեզվաբանության, հասարակական մյուս գիտությունների լայն ոլորտների տարաբնույթ հետազոտություններով ծավալվել ու ընդարձակվել է հայագիտությունը։ Արդյունքում պատմագիտական, լեզվաբանական, փիլիսոփայական, արվեստաբանական ծանրակշիռ՝ ոչ քիչ աշխատություններ թարգմանվել են աշխարհի տարբեր լեզուներով։

Հայոց պատմության տարբեր հարցերի վերաբերյալ արժեքավոր աշխատություններ են հրապարակել Լևոն Մելիքսեթ-Բեկը, Լևոն Խաչիկյանը, Հակոբ Անասյանը, Վահան Ռշտունին, Վազգեն Հակոբյանը, Կարո Ղաֆադարյանը, Սեդրակ Բարխուդարյանը և ուրիշներ։

Պատմագիտության մեջ արժեքավոր ներդրում էին Աշոտ Հովհաննիսյանի «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» (հ. 1, 2, 1957, 1959), «Նալբանդյանը և իր ժամանակը» (հ. 1, 2, 1955, 1956) աշխատությունները։

XIX դարում հայ ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարի պատմության հարցերի ուսումնասիրությանը ձեռնամուխ եղավ Մկրտիչ Ներսիսյանը. դեռևս 1940-ին հրատարակված «Նարոդնիկական խմբակներն Անդրկովկասում 1870—1880 թթ.» և ապա դրան հաջորդած «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850—1870 թթ.» աշխատությունները նշանակալից երևույթ էին մեր պատմագրության մեջ։ Այդ աշխատություններին հետևեցին պատմագիտական բազմաթիվ հրապարակումներ, այդ թվում՝ Ե. Սարդայանի, Մ. Զուլալյանի, Ռ. Հովհաննիսյանի, Ռ. Սահակյանի, Ա. Համբարյանի, Հ. Պողոսյանի գործերը։ 1965—1966 թթ. համազգային շարժման օրերին Մ. Ներսիսյանի ջանքերով ռուսերեն լեզվով հրապարակվեց «Հայերի գենոցիդը Օսմանյան կայսրության մեջ» փաստաթղթերի ժողովածուն։

Պատմագիտական լայն ընդգրկում ունեն Աբգար Հովհաննիսյանի աշխատությունները՝ նվիրված XVIII դարի հայ-ռուսական հարաբերությունների և հայ ազատագրական շարժումների պատմությանը, Անդրկովկասի միացմանը Ռուսաստանին և XIX դարի միջազգային հարաբերություններին, Հովսեփ Էմինի գործունեության գնահատությանը, ֆրանսիական մեծ հեղափոխության պատմության առանձին խնդիրների։ Հարուստ աղբյուրների հիման վրա են գրվել Գ. Գալոյանի՝ «Բանվորական շարժումը և ազգային հարցը Անդրկովկասում (1900—1922)», «Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները» (ռուսերեն և հայերեն լեզուներով), «Պատմության քառուղիներում» աշխատությունները։ Հարկ է նշել, որ Գ. Գալոյանը, Աշ. Հովհաննիսյանը, Ս. Երեմյանը, Լ. Խաչիկյանը, Գ. Սարգսյանը, Վ. Բարխուդարյանը և այլք մեծ ջանք են գործադրել «Հայ ժողովրդի պատմության» ութհատորյակի հրատարակության գործում։

Հասարակական գիտությունների բնագավառում առանցքային հարցերից մեկն էլ հայ-ռուսական հարաբերությունների լուսաբանության անհրաժեշտությունն էր։ Ըստ այդմ մեծ թիվ են կազմում պատմաբանների, գրականագետների, լեզվաբանների, արվեստաբանների տարաբնույթ հրատարակությունները. այդ ուղղությամբ զգալի գործ են կատարել Աշ. Հովհաննիսյանը, Աբ. Հովհաննիսյանը, Մ. Ներսիսյանը, Վ. Ոսկանյանը, Ե. Աղայանը, Վ. Պարսամյանը, Ժ. Անանյանը, Վ. Մարտիրոսյանը, Ն. Թավաքալյանը, Ս. Արեշյանը, Գ. Հովնանը և ուրիշներ։

Բնականաբար, պատմաբանների ուշադրության կենտրոնում են եղել և հայոց դաղթավայրերը՝ իրենց յուրօրինակ կյանքով ու պատմությամբ։ Հրապարակվել են Վ. Բարխուդարյանի, Վ. Միքայելյանի, Ջ. Գալստյանի, Ա. Յուխտի, Յա. Դաշկևիչի և այլոց աշխատությունները։

Հին և միջին դարերի պատմության վերաբերյալ լույս տեսան Լ. Բարայանի, Ա. Տեր-Ղևոնդյանի, Ս. Կրկյաշարյանի, Բ. Ուլուբաբյանի, Է. Դանիելյանի աշխատությունները։

Նոր և նորագույն շրջանի պատմության հարցերի վերաբերյալ լույս են տեսել Դ. Ղարիբջանյանի, Հ. Ավետիսյանի, Լ. Խուրշուդյանի, Հ. Սիմոնյանի, Կ. Խուդավերդյանի, Վ. Ղազախեցյանի, Վ. Դիլոյանի, Դ. Մուրադյանի աշխատությունները։

Վերջին տարիներին հրատարակվեցին մի շարք աշխատություններ նվիրված Արցախի հերոսամարտին. «Լեռնային Ղարաբաղ. պատմական տեղեկանք», «Լեռնային Ղարաբաղը 1918—1923 թթ. փաստաթղթերի և նյութերի ժողովածու», «Իրադարձությունները Լեռնային Ղաբաբաղում» և այլն։

ՀԴԱ հրատարակություններում իր կարևոր նշանակությունն է ունեցել «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մատենաշարը։ Մասնագիտական հմտությամբ թարգմանվել, գիտական անհրաժեշտ մեկնություններով և ծանոթագրություններով 15 հատորով հանրությանն են ներկայացվել հնօրյա հուշարձաններ, բազմահարուստ նյութեր հունական, ասորական, բյուզանդական, արաբական, թուրքական սկզբնաղբյուրներից։ Այդ գործում մեծ է Ա. Սաֆրաստյանի, Հ. Բարթիկյանի, Ս. Կրկյաշարյանի և մյուսների ավանդը։

Կարևոր տեղ է հատկացվել մամուլի պատմությանը նվիրված աշխատանքներին, արժանի ընդունելություն են գտել Ա. Կարինյանի, Մ. Մխիթարյանի, Մ. Հակոբյանի, Ա. Խառատյանի, Մ. Բաբլոյանի, Լ. Գևորգյանի և այլոց ուսումնասիրությունները։

Հին Արևելքի և Հայաստանի փոխհարաբերությունների հարցերը գիտական համակողմանի քննության են արժանացել Գ. Սարդսյանի աշխատություններում։ Այդ խնդիրներն են արծարծվում նաև Ն. Հարությունյանի, Ա. Քոսյանի ուսումնասիրություններում։ Արևելքի ժողովուրդների պատմության հետազոտությանն են նվիրված Ա. Տեր-Ղևոնդյանի, Գ. Ասատրյանի, Շ. Մհոյանի, Հ. Եղանյանի, Մ. Խամոյանի աշխատությունները։ Ն. Հովհաննիսյանի ուսումնասիրություններում լուսաբանվել են արաբական երկրների քաղաքական անկախության, ազգային պետականության հաստատման համար մղված պայքարի հարցեր, Կովկասագիտության հարցերն են հետազոտվել Պ. Մուրադյանի, Հ. Մարգարյանի, Պ. Ջորանյանի աշխատություններում։

Հնագիտության դծով հրատարակվել են «Դիվան հայ վիմագրության» 6 հատորները, «Հայաստանի հնագիտական հուշարձանները» 14 հատորով, «Հնագիտական պեղումները Հայաստանում» 22 հատորով. նույնպիսի կարևոր հրատարակություններ են «Հայ ժողովրդական հեքիաթների» 13 և «Հայ ազգագրության և բանահյուսության» 18 հատորները և այլն։ Հրապարակվել են Բ. Պիոտրովսկու, Բ. Առաքելյանի, Հ. Մարտիրոսյանի, Գ. Տիրացյանի, Ս. Հարությունյանի, Ա. Քալանթարյանի, Է. Խանզադյանի և այլոց արժեքավոր աշխատությունները։ Բեղմնավոր աշխատել են ազգագրագետներ, բանահավաքներ Վ. Բդոյանը, Դ. Վարդումյանը, Է. Կարապետյանը, Ա. Նագինյանը և ուրիշներ։

Տնտեսագիտության ինստիտուտի գիտական հրապարակումներում աչքի են ընկնում ժողովրդատնտեսական խնդիրներ լուծելու ինտենսիվ որոնումները։ Լույս են տեսել Մ. Քոթանյանի, Վ. Խոջաբեկյանի, Ռ. Միրզոյանի, Բ. Սելվինաղյանի և այլոց աշխատությունները։

Ազգային-մշակութային գիտական խոշոր ձեռքբերումներ արձանագրվեցին մասնավորապես հայոց լեզվի կառուցվածքին ու գործառնությանը, լեզվի պատմությանը, համեմատական քերականությանը, բարբառագիտու-

թյանը, գրական հայերենի կանոնարկմանը, տերմինաբանության մշակմանը վերաբերող աշխատություններով։ Այդ ձեռքբերումների շնորհիվ են ըստեղծվել քառահատոր «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը», «Ժամանակակից հայոց լեզու» ակադեմիական եռահատոր քերականությունը և այլ բնույթի աշխատություններ։

Հր. Աճառյանի, Մ. Արեղյանի, Ստ. Մալխասյանցի, Գ. Ղափանցյանի հիմնարար ներդրումներով Հայաստանը դարձավ հայերենագիտության օրրան։ Տարեցտարի աճում է հայերենագիտության հեղինակությունը։ Դրա վկայություններից են Ա. Ղարիբյանի, Էդ. Աղայանի, Գ. Սևակի, Վ. Առաքելյանի, Ս. Աբրահամյանի, Ա. Սուքիասյանի, Հ. Մուրադյանի, Լ. Հովսեփյանի աշխատությունները։ Միջազգային ճանաչման են արժանացել Գ. Ջահուկյանի աշխատությունները։

Գիտությունների ակադեմիայի հիմնական խնդիրներից մեկն էլ տասնամյակներ շարունակ եղել է բառարանների՝ մասնավորապես ռուս-հայերեն բառարանների հրատարակությունը. այս տեսակետից անուրանալի է Ա. Ղարիբյանի, Ե. Տեր-Մինասյանի, Մ. Գևորգյանի, Վ. Փոթեյանի վաստակը։

Միջնադարյան հայ փիլիսոփաների երկերի քննական բնագրերի պատրաստման և հրապարակման առումով բեղմնավոր աշխատանք են կատարել Վ. Ջալոյանը, Ս. Արևշատյանը, Գ. Գրիգորյանը, Կ. Միրումյանը և ուրիշներ։

Միջազգային լայն ճանաչման են արժանացել Գ. Բրուտյանի աշխատությունները։ Հրատարակվել են Հ. Գևորգյանի, Ս. Թովմասյանի, Ա. Էկմալյանի, Էդ. Մարգարյանի, Ա. Սվասյանի իմացաբանության, տրամաբանության հարցերին նվիրված աշխատանքները։

Ժողովրդի հոգևոր առաջընթացում Գիտությունների ակադեմիայի հրատարակչության ունեցած դերի ու նշանակության ապացույցներից են դրականության ինստիտուտի հրատարակությունները՝ «Սասնա ծռեր» ժողովրդական էպոսը, որը երեք գրքով իրագործվեց Մանուկ Արեղյանի, Կարո Մելիք-Օհանջանյանի ջանքերով, դրան հաջորդեց պատերազմական ծանր տարիներին ավարտված Մ. Արեղյանի «Հայոց հին գրականության պատմություն» երկհատոր աշխատությունը։ Այնուհետև լույս տեսան հայոց դասականների՝ Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Հովհ. Թումանյանի, Ե. Չարենցի և ուրիշ գրողների երկերի գիտական հրատարակությունները, Մ. Աբեղյանի երկերի ութհատորյակը, ակադեմիկոս Ա. Ղանալանյանի աշխատասիրությամբ՝ «Առածանին» ու «Ավանդապատումը», միջնադարյան տաղերգուների հրատարակությունները՝ գիտական մեկնություններով։ Ընթացքի մեջ է Հովհ. Թումանյանի երկերի նոր լիակատար հրատարակությունը՝ Էդուարդ Ջրբաշյանի ընդհանուր խմբագրությամբ։ Ինստիտուտը իրագործեց նաև «Հայ նոր գրականության պատմությունը» հինգ հատորով (գլխավոր խմբագիր Ս. Սարինյան)։ Գրականագիտական լուրջ արժեք ունեն Էդ. Ջրբաշյանի, Ս. Սարինյանի, Հ. Թամրազյանի աշխատանքները։ Սուրեն Աղաբաբյանի ուսումնասիրությունները հիմք ծառայեցին ստեղծելու նորագույն ժամանակների հայ գրականության ամբողջական պատմությունը՝ երկու հատորով։ Հայ գրականության հնօրյա և նոր ժամանակների խնդիրների վերհանման մեկնակետերով են գրված Ե. Շահազիզի, Խ. Սարդսյանի, Ա. Ինճիկյանի, Պ. Սևակի, Պ. Հակոբյանի, Ա. Ջաքարյանի աշխատությունները։ Հրապարակվել են Ա. Գրիգորյանի, Ա. Ծղիազարյանի, Զ. Ավետիսյանի, Դ. Գասպարյանի, Ն. Ադալյանի աշխատանքները, Ս. Շտիկյանի նոր ժամանակների գրականության տարեգրությունը. սփյուռքահայ գրականության հարցերով են զբաղվել Գ. Սևանը, Վ. Փարթամյանը, Գ. Գուլումջյանը։

Հայ հին և միջնադարյան գրականության պատմության ուսումնասիրության բնագավառում հետազոտական կարևոր աշխատանք են կատարել Վ. Նալբանդյանը, Մ. Ավդալբեկյանը, Ա. Սրապյանը, Հ. Սիմոնյանը և ուրիշներ։

Եթե գրականությունն ու գրականագիտությունը Գիտությունների ակադեմիայում նշանավորվեցին ի դեմս հիմնադիր անդամներ Ավ. Իսահակյանի, Մ. Արեղյանի և Ա. Տերտերյանի, ապա հայոց մշակույթի ավանդական ուղղություններից մյուսը՝ արվեստն ու արվեստաբանությունը նշանավորվեցին ակադեմիկոսներ Մարտիրոս Սարյանի և Արամ Խաչատրյանի անուններով։ Լույս տեսան Կոմիտասի երկերը վեց հատորով, Մ. Թումանյանի «Երգն ու բանը»՝ երեք հատորով, հայոց ճարտարապետությանը, գեղանկարչությանն ու մանրանկարչությանը, երգ-երաժշտությանը, թատերական արվեստին ու կինոարվեստին նվիրված Ք. Կուշնարյովի, Ս. Լեսիցյանի, Ռ. Դրամփյանի, Լ. Դուռնովոյի, Ս. Մնացականյանի, Վ. Մաթևոսյանի, Վ. Ղազարյանի, Մ. Հասրաթյանի, Մ. Ղազարյանի արժեքավոր ուսումնասիրությունները։ Թատերագիտության ասպարեզում նշանակալի ներդրում են Ռուբեն Զարյանի, Լ. Հախվերդյանի, Հ. Հովհաննիսյանի, Բ. Հարությունյանի աշխատությունները։ Երաժշտության ասպարեզում հայտնի են Ռ. Աթայանի, Դ. Դյոդակյանի, Կ. Սարգսյանի աշխատանքները։ Ալեքսի Սահինյանի ջանքերով դարերի հեռուներից վեր խոյացավ Գառնիի տաճարը՝ գիտական հանդամանալի ուսումնասիրությամբ հանդերձ։

Հայագիտությունը լայն հունով զարգացել-ճյուղավորվել է Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում. Ա. Մնացականյանի, Հ. Փափազյանի, Շ. Նադոյանի, Գ. Արզարյանի, Լ. Տեր-Պետրոսյանի, Վ. Գրիգորյանի, Ա. Մարտիրոսյանի, Ն. Թահմիզյանի, Լ. Խանլարյանի, Մ. Դարբինյանի, Բ. Զուդասդյանի, Խ. Թորոսյանի, Օ. Եգանյանի, Ս. Վարդանյանի և ուրիշների աշխատասիրությամբ հրատարակվել են մեծ թվով քննական բնագրեր, թարգմանարար՝ բազմադան ձեռագրեր, ուսումնասիրություններ և այլն, այդ աշխատանքների ծավալմանը մեծապես նպաստել են Լ. Խաչիկյանը և Ս. Արևշատյանը։ Մատենադարանի աշխատությունների մեծ մասը լույս է ընծայել ՀԳԱ հրատարակչությունը։

* * *

Ակադեմիայի գործունեության ծավալման առաջին իսկ տարիներից գիտական պարբերականների հրատարակությունը եղել է առանցքային խնդիրներից մեկը։ Պարբերական հրատարակությունների առաջին «ծիծեռնակներից» են «Աստղագիտարանի բյուլետենը» (1935 թ.), «Հայաստանի աստղագիտարանի բյուլետենը» (1938 թ.), «Հայաստանի բուսաբանական այգու բյուլետենը» (1939 թ.)։ Առաջին լիարժեք պարբերականը՝ «Տեղեկագիրը» (հասարակական գիտությունների սերիա), լույս է տեսել 1940 թ.։ «Տեղեկագիրը»՝ «Լրաբեր հասարակական գիտությունների» վերանվանումով, հրատարակվել է 1956 թ.։ Ներկայումս ամսագրի խմբագիրն է Ա. Խառատյանը։ Ամսագիրը տպագրել է և շարունակում է տպագրել հասարակագիտական բնույթի ամենատարբեր նյութեր։ Պարբերականում իրենց ուսումնասիրություններով հանդես են եկել հայագիտության բնագավառի բազմաթիվ ներկայացուցիչներ։

Ակադեմիայի գիտահետազոտական աշխատանքների ընդհանուր «պատկերն» է կոչված վերարտադրելու «ՀԳԱ զեկույցներ» ամսագիրը, որ հրատարակվում է 1944 թ.։ Այն տեղեկություն է տալիս Հայաստանում բնական գիտությունների այսօրվա մակարդակի և որակի մասին։ «Զեկույցների» խմբագիրներն են եղել Վ. Համբարձումյանը, Ա. Նազարովը. այժմ խմբագրում է Դ. Սեդրակյանը։

Առաջին պարբերականներից է «Բնական գիտությունների տեղեկագիրը», որ լույս է տեսել 1940 թ.։ Ամսագրում ներկայացված են եղել տարբեր գիտություններ՝ կենսաբանություն, քիմիա, մաթեմատիկա, երկրաբանություն և այլն։ Այդ անվանումով ամսագիրը հրատարակվել է մինչև 1948 թ.։

ՀԳԱ ավանդական մյուս պարբերականը՝ «Հայաստանի կենսաբանական հանդեսը», հիմնադրվել է 1948 թ.՝ որպես «ՀԳԱ տեղեկագիր, կենսաբանա-

կան գիտությունների շարք»։ «Հայաստանի կենսաբանական հանդեսում» տպագրվում են հոդվածներ նվիրված կենսաբանության տեսական և կիրառական հարցերին։ Վերջին տարիներին մեծ նշանակություն է տրվում կենսաբանության հեռանկարային նոր ուղղություններին։ Ամսագրի խմբագիրն է Է. Աֆրիկյանը։

1948 թ. սկսում է լույս տեսնել «Տեղեկագիր. ֆիզիկա-մաթեմատիկական, բնական և տեխնիկական գիտությունների սերիա» պարբերականը, տարեկան վեց հատորով։ 1957 թ. այդ «Տեղեկագիրը» տրոհվում է յոթ շարքի՝ «Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների շարք», «Տեխնիկական գիտությունների շարք» (այժմ այդ շարքի խմբագիրն է Ռ. Մարտիրոսյանը), «Երկրաբանական և աշխարհագրական գիտությունների շարք», «Գիտություններ երկրի մասին». այդ շարքի խմբագիրներն են եղել Հ. Մաղաքյանը, Ա. Ասլանյանը, Ա. Գաբրիելյանը։ «Քիմիական գիտությունների շարք»-ը այժմ խմբագրում է Ս. Վարդանյանը։

1961 թ. լույս է տեսնում «Փորձարարական և կլինիկական բժշկություն» հանդեսը. խմբագիրն է Ռ. Ստամբոլցյանը։ ՀԳԱ պարբերականները նկատելիորեն աշխուժացրեցին գիտական միտքը, ուշադրությունը կենտրոնացնելով գիտության շարժուն, դինամիկ ընթացքների, առաջնահերթ հարցերի վրա։

ՀԳԱ պարբերականների պատմության մեջ նշանակալի երևույթ էր «Պատմա-բանասիրական հանդեսի» ստեղծումը։ 1958 թ. հանդեսի անփոփոխ խմբագիրն է Մկրտիչ Ներսիսյանը։ Հայագիտական լայն ընդգրկում ունեցող պարբերականի պահանջը թելադրված էր Հայաստանում հասարակական գիտությունների, մասնավորապես հայագիտության առանձին ճյուղերի զարգացման, նոր ուղղությունների ու պրոբլեմների մշակման անհրաժեշտությամբ։ «Պատմա-բանասիրական հանդեսի» էջերում տպագրված նյութերը վերաբերում են հայ ժողովրդի դարավոր պատմության հին, միջնադարյան և նոր շրջաններին, աղբյուրագիտական, վիմագրական, հնագիտական, ազգագրական բնույթի հարցերին։ Պարբերականի մյուս բաժիններն ընդգրկում են բանասիրությունը, լեզվաբանությունը, փիլիսոփայությունը, իրավունքի պատմությունը, արվեստն ու ճարտարապետությունը և դրանց առնչվող հարակից պրոբլեմներ։

1965 թ. հրատարակվում է «Աստղաֆիզիկա» ամսագիրը։ Այդ պարբերականը զգալի դեր է կատարել աստղագիտության զարգացման բնագավառում։ Նրա էջերում տպագրվել են արտասահմանյան նշանավոր գիտնականներ։ «Աստղաֆիզիկա» հանդեսը հիմնադրման օրից թարգմանվում և տպագրվում է ԱՄՆ-ում անգլերեն լեզվով, սկզբում՝ «Ֆարադեյ պրես», իսկ վերջին երկու տասնամյակում՝ «Պլենում պրես» հրատարակչությունների կողմից. լեզուն ռուսերենն է, մասամբ նաև՝ անգլերենը։ «Աստղաֆիզիկա» ամսագրի խմբագիրն է եղել Վիկտոր Համբարձումյանը, 1988 թ. խմբագիրն է Լյուդվիգ Միրզոյանը։

1966 թ. ՀԳԱ նախագահության որոշմամբ որպես ինքնուրույն պարբերական է հիմնվել «Մաթեմատիկա» ամսագիրը, որի խմբագիրն առ այսօր Մ. Ջրբաշյանն է։ «Մաթեմատիկա» ամսագիրը համախմբեց ձևավորվող, գոյության իրավունք ձեռք բերող հայկական մաթեմատիկական դպրոցը։ 1979 թ. այն ամբողջովին սկսեց թարգմանվել և տպագրվել անգլերեն լեզվով ԱՄՆ-ում։ Ամսագիրը ընդգրկում է մաթեմատիկական գիտության հիմքերի հիմքը հանդիսացող մաթեմատիկական անալիզի մի քանի հիմնարար ուղղություններ։

1966 թ. լույս է տեսնում «Ֆիզիկա» ամսագիրը, 1984 թ. այն հրատարակվում է ԱՄՆ-ում «Ալերտոն պրես» հրատարակչությունում։ Երկար տարիներ ամսագրի խմբագիրն է եղել Գ. Ղարիբյանը, այժմ խմբագիրն է Վ. Հարությունյանը։

1966 թ. ՀԳԱ նախագահության որոշումով լույս է տեսնում նաև «Մեխանիկա» ամսագիրը, որի խմբագիրը երկար տարիներ եղել է Ն. Հարու-

թյունյանը, այժմ Ս. Համբարձումյանն է։ 1986 թ. հունվարից այդ պարբերականը թարգմանաբար հրատարակվում է ԱՄՆ-ում։

1963 թ. հրատարակվում է «Արյան շրջանառություն» հանդեսը։ ՀԳԱ նախագահության որոշմամբ (1993 թ.) այն վերանվանվել է «Հայաստանի վիրաբուժության տեղեկատու». երկար տարիներ հանդեսի խմբագիրն է եղել Ալեքսանդր Միքայելյանը, որի ավանդը մեծ է այդ ասպարեզում. այժմ հանդեսը խմբագրում է Հ. Թամազյանը։

Միութենական գիտությունների ակադեմիայի նախագահության որոշմամբ 1981-ից հրատարակվում է «Նեյրոքիմիա» ամսագիրը, որի խմբագիրն է Ա. Դալոյանը։ Այս ամսագրի էջերում տպագրվում են նեյրոքիմիայի բնագավառի հայ և արտասահմանյան մասնագետների փորձարարական ու տեսական հետազոտություններ։ 1993 թ. պարբերականը Ռուսաստանի ԳԱ և Հայաստանի ԳԱ նախագահությունների որոշմամբ համարվում է համատեղ հրատարակվող ամսագիր։

* * *

Հայաստանի ակադեմիական հրատարակությունների պատմությունը գիտության տարբեր բնագավառների ակնառու ձեռքբերումների պատմություն է, սակայն ՀԳԱ հրատարակչական գործը, ցավոք, զերծ չի մնացել որոշ թերություններից։ Դիտական զգալի հաջողությունների հետ միասին եղել են ոխալներ, դասական նշանակալի ձեռքբերումների կողքին՝ նահանջի պահեր, երբ դոգմատիկ մտածելակերպը արգելակել կամ դանդաղեցրել է գիտական առաջընթացը։ Սակայն իրողությունն այն է, որ մշտապես հաղթանակել են գիտական-մշակութային ստեղծագործ առողջ ուժերն ու կարողությունները։ Ընդհանուր առմամբ մեծ ու հարուստ ժառանգություն է ստեղծվել մաթեմատիկայի, տեխնիկայի, կենսաբանության, հայագիտության և գիտության այլ բնագավառներում։ Ակադեմիայի հրատարակությունների ձեռքբերումները 50 տարում մեր ժողովրդի ակնառու նվաճումն է։

ИЗДАНИЯ АКАДЕМИИ ЗА ПЯТЬДЕСЯТ ЛЕТ

Доктор филол. наук *Г. Н. ОГАНЕСЯН*

К 50-летию создания Национальной академии армянские ученые идут с богатым багажом научной продукции по всем направлениям науки. Издание армянской научной книги имеет богатые традиции. Беря свое начало в глубокой древности, научная книга только после создания Армянского филиала союзной академии (АрмФАН) обрела государственную возможность для развертывания издательской деятельности. В издательстве Академии наук выходят в свет научные книги по многим отраслям науки — астрофизики, биологии, химии, истории, археологии, языку. АН издавала многотомные серийные работы: «Геология Армении», «Синтезы гетероциклических соединений», «Проблемы кибернетики», «Археологические раскопки Армении», 6 томов сборников документов об армяно-русских отношениях и др. Достойное место занимают периодические издания Академии наук — 14 наименований — среди них международное признание имеют журналы «Астрофизика», «Математика», «Физика», «Нейрохимия», «Историко-филологический журнал».